

ԱՊՐԻԼՅԱՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՂԴԱԴՈՒՄ

Բաղդադի առաջնորդարանից հաղորդում են.

1987 թվականի Ծաղկազարդը, Ավագ Շաբաթը, Ս. Հարության տոնը և Ապրիլ 24-ի հուշատոնը բացառիկ հանդիսավորությամբ են նշվել Բաղդադում՝ ի հոգևոր սնունդ և մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի: Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին և լայն շրջափակը եռում էին համայնքի զավակներով, որոնք և՛ իրենց ոգեշնչող ցնծությամբ, և՛ միահամուռ ներկայությամբ խանդավառ մթնոլորտ էին ստեղծում:

Իրաքի հայ բնակչությունը կազմում է մոտավորապես 20000 հոգի, որոնց մոտ 14000-ը կայք է հաստատել Բաղդադում: Արարողություններին մասնակցում էին ոչ միայն բաղդադցիներ, այլև այլ շրջանների հայեր, մոտ 11000 հոգի. սա վկայում է հայ ժողովրդի միասնական ջանքի և առաջնորդարանի լավ աշխատանքի մասին՝ գլխավորությամբ թեմի բարեխնամ առաջնորդ գերշ. Տ. Ավագ եպիսկոպոս Ասատուրյանի:

Խորհրդանշական է, որ Ոտնլվայի արարողությանը, իբրև Քրիստոսի աշակերտներ, մասնակցել են 12 հայ զինվորներ, որոնք իրենց պարտականությունն են կատարում իրենց ծննդավայրի նկատմամբ՝ Իրաք-Իրանյան երկարամյա ուժասպառ պատերազմում: Սրբազան հայրը իր քարոզում հույս է հայտնել, որ այդ օրվա օրհնությունը այդ զինվորներին կբերի խաղաղության ցանկալի ավետիսը. «Խաղաղություն հեռավորաց, խաղաղություն մերձավորաց, խաղաղություն ամենեցուն»:

Հատկանշական է նաև, որ Ապրիլյան մեծ եղեռնի հուշատոնը նույնպես կատարվել է եկեղեցում, միասնական ջանքերով և համախումբ: Ներկաներին իր առաջնորդական պատգամն է տվել Ավագ սրբազանը, որից հետո Ազգային կենտրոնական վարչության գլխավորած թափորը առաջնորդվել է տեղի Ապրիլյան հուշարձան, ուր հոգեհանգստյան պաշտոն է կատարվել «Բյուրավոր նահատակաց հոգիների համար»:

Բաղդադում ապրիլ ամիսը հաստատեց հայ ժողովրդի ապրելու կամքը:

ԹՂԹԱԿԻՑ